«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

10 հունիսի 2021թ. N 43 - Լ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի կանոնադրության 8.1 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի 2021 թվականի գործունեության տարեկան ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված
«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2021թ. հունիսի 10-ի N 44 - Լ որոշման

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»

հասարակական կազմակերպության

Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի

2021 թվականի գործունեության ծրագիրը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի (այսուհետ՝ Հաշվապահական հաշվառման հանձնաժողով) 2021թ. գործունեության ծրագիրը (այսուհետ՝ Գործունեության ծրագիր) կազմվել է ՝ նպատակ ունենալով ապահովել Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի գործառույթների և նպատակների արդյունավետ և արդյունքահեն իրագործումը:

ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ և ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Գործունեության ծրագրի հիմքում դրված են Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված գործառույթները և նպատակները:

Գործունեության ծրագիրը կազմելիս նախատեսվող միջոցառումները և դրանց կատարման ժամկետները պլանավորվել են՝ ելնելով յուրաքանչյուր կոնկրետ գործառույթի բնույթից և առկա տեխնիկական և մարդկային ռեսուրսներից:

Հանձնաժողովի կողմից այլ գործառույթների իրականացման համար կոնկրետ միջոցառումներ և ժամկետներ սահմանված չեն՝ դիտարկելով դրանք որպես ընթացիկ աշխատանքներ, որոնք կիրականացվեն ըստ անհրաժեշտության:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

h/h	Գործառույթ	Միջոցառում	Ժամկետ
1	Մասնագիտական աշխատաժողովների, սեմինարների, պանելային քննարկումների, կլոր-սեղանների կազմակերպում	Կուսումնասիրվեն նման միջոցառումների կազմակերպման թեմաները և կներկայացվեն Պալատի Խորհրդի հավանությանը, որից հետո կկազմակերպվի նման միջոցառում՝ ֆինանսական և ոչ ֆինանսական կառույցների հետ համատեղ:	Տարվա վերջ
2	Հաշվապահական հաշվառման ոլորտում մասնագիտական զարգացումների վերաբերյալ իրազեկում	ՖՀՄՍ-ների վերջին զարգացումների և փոփոխությունների վերաբերյալ նյութերի պատրաստում	Սեպտեմբերի 30

3	Հաշվապահական հաշվառման ոլորտին վերաբերող շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների կազմակերպում	Կկազմակերպվեն շարունակական մասնագիտական դասընթացներ ՖՀՄՍ-ների վերջին զարգացումների և փոփոխությունների վերաբերյալ:	Կհամաձայ-նեցվի Պալատի հետ
4	Այլ գործառույթների իրականացում	Հաշվապահական ծրագրային լուծումներ ապահովող կազմակերպությունների հետ քննարկումների իրականացում՝ ուղղված ՖՀՄՍ-ների շարունակական փոփոխությունների հետ ինտեգրացիային:	Մինչ տարեվերջ

ՀԱՊ Հաշվապահական հաշվառման

Հանձնաժողովի նախագահ՝ **Անուշ Գրիգորյան**